

No. 2593 10

Հոգեշնորհ
Տ, Ներսէս վարդապետ Տօլապեան
Տեսուչ Հայոց Վանուց
ԼԱՒՈՂԻԿԷ

Ներկակ կը զրկենք Ձեր Սիրելութեան, տեղւոյս նրանսական Հիւպոտոսարանի միջոցաւ ամսոյս 5-ին մեր կողմէ Սիրիոյ նրանս, Բարձր Գոմիներ Նորին Վսեմութիւն ձեռնարկ Սարայլի յղուած պաշտօնագրին օրինակը:

Ինչպէս պիտի տեղեկանաք այդ պաշտօնագրի պարունակութենէն, Սիրիոյ մէջ Ս, Աթոռոյս թեմերը եղող Պէյրութի, Դամասկոսի եւ Լաւողիկէի մեր Հոգ, Տեսչութիւնները ներկայացուցած ենք Նորին Վսեմութեան իբրեւ Պատրիարքական Փոխանորդներ, որոնց յանձնուած են Նոյն տեղերու մեր վանքերուն Տեսչութիւնները, եւ բնիկ Հայ Հասարակութեանց Հոգեւոր Հովուութեան պաշտօնները միանգամայն:

Որոշմամբ Տնօրէն Ժողովոյս, այդ պաշտօնագրին օրինակը յղուեցաւ Նաեւ Պէյրութի եւ Դամասկոսի մեր վանքերու Տեսչութեանց, յանձնարարուելով, որ ըստ առաջնոյն տէր կանգնին Ս, Աթոռոյս Նոյն վայրերու մէջ ունեցած վանքերուն եւ անոնց նիւթակայ Հաստատութեանց եւ Կալուածներուն, զգոյշ ըլլալով որ տեղի չի տրուի արտաքին որեւէ ոտնձգութեանց: Նոյն Տեսչութեանց հրահանգ տրուեցաւ Նաեւ վարել իրենց պաշտօնները, պատասխանատու ըլլալով ուղղակի եւ միմիայն Ս, Աթոռոյս, Որուն Նոյն տեղերու մէջ ունեցած շահերուն պաշտպանութիւնը յանձնուած է իրենց իբրեւ ներկայացուցիչներու Պատրիարքական Աթոռոյն ներուսադէմի:

Լաւողիկէի վանուց Տեսչութեան պարագան եւս նկատողութեան առուուելով Ժողովիս մէջ, զիտուեցաւ որ Ձեր Սիրելութիւնը, իբրեւ Միաբան Ս, Աթոռոյս եւ Անոր կողմանէ կարգուած պաշտօնեայ մը, ցարդ վարելով հանդերձ տեղւոյդ վանքին Տեսչութիւնը, ստանձնած էք միանգամայն, հաճութեամբ Ս, Աթոռոյս, Անտիրոքի Թեմին Առաջնորդութիւնը, որը ենթակայ է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Եւ սակայն, որպէսզի Սիրիահայ Գաղթականութեան վարչական կազմակերպութեան խնդրոյն շուրջ յառաջիկային ըլլալիք տնօրինութեանց պարագային հնարաւոր ըլլայ ճշդել Նաեւ Լաւողիկէի մէջ Ս, Աթոռոյս եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւական զիջքերն ու փոխ-յարաբերութիւնները, Ժողովս պետք տեսած է այժմէն զիտնալ, թէ Ձեր Սիրելութիւնը պիտի փափարի իբրեւ միաբան Ս, Ուխտոս վարել միմիայն Լաւողիկէի վանուց Տեսչութիւնը, պատասխանատու ըլլալով -ինչպէս Սիրիական միւս երկու Տեսչութիւնները- ուղղակի եւ միմիայն Ս, Աթոռոյս, թէ ոչ՝ պիտի նախընտրէ ենթակայ ըլլալ Կիլիկիոյ Ս, Կաթողիկոսին Հոգեւոր Իրաւասութեան վարելու համար Անտիրոքի Առաջնորդութիւնը, որը բոլորովին անշատ պէտք է ըլլայ այսուհետեւ Լաւողիկէի մեր վանուց Տեսչութեան:

Յառաջիկային որեւէ շփոթութեանց կամ թիրիմացութեանց տեղի չտրուելու համար, Տնօրէն Ժողովս կսպասէ որ Ձեր Սիրելութիւնը փութայ այս մասին իր որոշ եւ անվերապահ տեսակէտը հաղորդել մեզ անյայտ:

Որշուինի Սիրոյ, Աղօթաբար
ՊԱՏՐԻԱՐԿ ԵՐԻՄԱՂԷՄԻ

Երանոս Գ